

այն ճանապարհ ճշմարիտ՝ անուանիցին սպասամբը ի ճշմարտութենէ»⁶ :

Այդ ամբաստանութիւնները ոչ նոր էին եւ ոչ ալ դարմանալի. հարկ էր՝ ըստ Մխիթարի՝ ամբաստանողներուն համար աղօթել. իսկ ինչ որ խորապէս կը խոցէր Աբրահայրը, էր իր հաւատքին դէմ եղած ամբաստանութիւնը, այն դաւանանքին՝ որուն համար կեանքը տալու սրատրաստ էր :

Սակայն անդործ չի մնար. կը գրէ արեւելք. կը կանչէ յականէ ամբաստանուած երկու վարդապետները, Հ. Գէորգն ու Հ. Յովհաննէսը, կը ջանայ փաստեր ու վկայութիւններ հաւաքել եկեղեցականներէ եւ աշխարհականներէ՝ իր առաքելներուն վարքին ու քարոզութեան ուղղութեան մասին. բայց վիսաւորապէս կը դիմէ իր երկնաւոր պաշտպաններուն՝ Աստուածածօր եւ Ս. Անտոնին, որուն անունին եւ պաշտպանութեան նուիրած էր իր հաստատութիւնը : Իր նոր վանքին մէջ հանգիստաւոր կը կատարէ անոր անուան յիշատակը. «Օգնեա՛ մեզ սուրբ Անտոնիէ, Օրհնեա՛ զմեզ սուրբ Անտոնիէ, Պահեա՛ զմեզ սուրբ Անտոնիէ, Ի թշնամեաց պատերազմէ» :

ՃԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆԸ

1718 տարուան Մայիսի 7ին, Զատիկի Դ. Կիրակիին վրայ լուսացող Շարաթ օրը կը բաժնուին Ս. Ղազարէն, Մխարանութեան եղբայրներու ջերմ իղձերով եւ աղօթքներով : Իրեն փոխան տեղակալ կը թողու Հ. Եղիա Վարդապետը. իրեն հետ են Հ. Գէորգ Այնթապցին եւ Հ. Յովհաննէս Պոլսեցի վարդապետները, որոնք Աբրահայր հետ՝ վիսաւոր ամբաստանուածներն են :

Նաւը կը բաժնուի Վենետիկոյ քարափէն՝ երեկոյեան ժամը վեցին : Ճամբորդները նախ սակաւաթիւ էին, յետոյ կը բազմանան, որովհետեւ անշուշտ նաւակայքներէն նորանոր ճամբորդներ կը հասնէին :

Օրուան յուզումները, նաւին անյարմարութիւնները թոյլ չեն տար որ այդ գիշեր կարենան աչքերնին փակել : Յաջորդ օրը՝ Կիրակի, կը նաւարկեն ամբողջ օրը : Կէսօրուան մօտերը «տեղ» մը կը ճաշեն, մէկ տուփաթ ծախսելով. երեկոյեան՝ նոյնպէս նաւին մէջն են. ընթրիքնին՝ հաց եւ հաւկիթ է : Գիշերը կը շարունակեն նաւարկել. քունը կը յաղթէ, այնքան ծանր է յոգնութիւնը. անով հանդերձ՝ Մխիթար երկու ժամ միայն կրնայ փակել աչքերը :

Կը բացուի Երկուշաբթի օրը, 9 Մայիս, կէսօրուան դէմ կը հասնին՝ Փոնջ գետի ճամբով՝ Ֆերրարա :

6. Մխիթար Աբրայ՝ Վենետիկէն, առ Տ. Գէորգ Վրդ.՝ Պոլիս (1717, Յունիս, Նմկ. թ. 13) :

Ֆերրարա ութերորդ դարէն յիշուած քաղաք մըն է, որ ունեցած է ԺԵ. դարուն իր փոքրիկ փառքերը : Կէսօրին՝ հոն կը ճաշեն, տուփաթ ու կէս սպառելով. այն է հաստատուած ճաշադինը :

Գաղթական Մխիթար մանրամասն կը բռնէ իր ճամբորդութեան ծախսերուն հաշիւը⁷ :

Աղբիականի եղերքը քերելէ ետք, մինչեւ Փոյ դետը, Ֆերրարայէն կը շարունակեն ջրանցքներով, փոքրիկ նաւակով եւ տասը մղոն տեղ ալ՝ կառքով. կը հասնին գետակ մը. հաւանաբար Փանառոյ գետակը :

Հոս Մխիթար չի կրնար չդանդաւոր, որովհետեւ այդ գիշեր՝ նաւակը փոքր է, «ի մէջ հոտեցեալ ջրոյ» . բազմութիւնն ալ՝ շատ, այնքան որ՝ ոտք դնելու տեղ չկայ. «թող զայլ դարչութիւնս ցետից այնքանեաց բազմութեանց»⁸ :

Ամբողջ գիշերը կը ճամբորդեն եւ յաջորդ Երեքշաբթի օրը, կէսօրին (Մայիս 10) կը հասնին Պոլոնիա քաղաքը : Կ'իջեւանին «Լոստարիա մի» (սլանդոն մը), կը պատարագեն եւ փոքրիկ նախաճաշիկ մը հաղիւ ըրած, կը պառկին քնանալու, մինչեւ ժամը 20, ապա կ'ելեն ճաշելու⁹ :

7. Ոչ միայն ուղեւորութեան, այլ բոլոր այդ շրջանի ծախսերը մանրամասնօրէն հաշուի կ'առնէ Մխիթար, քանի որ միջոցները շատ նեղ էին : Իրենները, Ս. Ղազարի մէջ պիտի սպրէին լոկ իրենց պատարագուցներով (16 վարդապետ ու 2 եղբայր). ինք նմանապէս այդ միջոցներով պիտի հոգար տեղափոխութեան, օթեւանի եւ այլ ծախսերը : Բարեբախտաբար, նախախնամական օգնութիւններ կը հասնէին իրեն : Լիվոնոյի մէջ՝ հայազգի վաճառականներ կ'ընեն զանազան նուիրատուութիւններ. Հռոմի մէջ՝ Վենետիկի դեսպանը կը հոգայ, ժամանակ փրփրականտայի տպարանը պիտի ընէ՝ կէս գինով : Եւ ահա փոքրիկ զուարճալի դէպք մը կու գայ թեթեւցելու Հիմնադրին հոգը :

«Վասն բանի մատանուոյն հիացայ եւ շնորհակալ եմ ողորմութեան. մանաւանդ զի խորհրդին ծանրացաւ հոս» :

Դէպքը հետեւեալն է : «Պր. Մելիք (Աբրահայր բարեկամ եւ բարեբարներէն) կ'երթայ Լիտոյ, բաղնիքի, կը պատմէ Հ. Եղիա Վարդապետ : Ծով մտնելէն առաջ՝ կը հանէ մատանին, ի ճէպն զնէ եւ կը կորսնցնէ : Կը փնտռէ, չի գտներ. դէմքը կախած՝ վանք կու գայ : Ծառ մը մխիթարական խօսքերէ ետք, Հ. Եղիա Վ. կ'ըսէ. Աստուծոյ յանձնէ, այսինքն՝ իբրեւ թէ ողորմութիւն տուած ես, Աստուծոյ նուիրէ : Մելիք, յուսահատ, ոչ իսկ կը կին փնտռելու կ'ելլէ. Հ. Եղիա երեք հօդի կը զրկէ. ասոնք կէս ժամէն կը վերադառնան, ուրախութեամբ մատանին բերելով : Ես այս մատանին Աստուծոյ նուիրեցի, կ'ըսէ Մելիք, հիմա իմա չէ, այլ՝ ձերը : Այդ մատանին 60-70 զուրուշ կ'արժէ. եթէ ծախելու տալիք՝ 50 տուփաթ արժէք կու տան. ահա քեզի 50 տուփաթ, ինչ որ կ'ուզես ըրէ, եւ մէկը չիմանայ» : (Հ. Եղիա Վրդ.՝ Վենետիկէն առ Մխ. Աբ. Հռոմ (1718, Յունիս 30) :

8. Մխ. Աբ. Ֆերրարայէն, առ Հ. Եղիա Վրդ.՝ Վենետիկ (1718, Մայիս 13, Նմկ. թ. 26) :

9. Ամդ :

Պոլոնիա՝ Ալպեաններու ստորոտը քաղաք մը, շատ հին՝ Ետրու-
րական ծագումով, աւելցուցած է իր վրայ հռոմէական, ապա Միջին
դարու ճարտարարուեստի մեծութիւններէն: Իբրեւ գիտական կեդրոն՝
իրն է Իտալիոյ եւ Եւրոպայի ամէնէն հին համալսարաններէն մէկը:

Բայց Միսիթարի հոգը տարբեր է. հազիւ քիչ մը կազդուրուած,
կը մտածէ անյապաղ ճամբայ ելլել:

Ժամանակին, ճամբորդութեան համար չկային այսօրուան կաղ-
մակերպուած դիւրութիւնները. պետութիւնները զինուորական կամ
պետական աղերս ունեցող փոխադրութիւնները միայն կը հոգային,
մնացածը թողլով քաղաքացիներուն անհատական ձեռնբերութեան:
Հետեւաբար, քաղաքացի առանձնականներ կաղմակերպած էին նա-
մակներու, ծրարներու եւ նաեւ ճամբորդներու փոխադրութեան պա-
տասխանատուութիւնը: Քերելով ծովեզերքէն, օգտագործելով՝ որ-
քան կարելի էր՝ գետերն ու գետակները, ջրանցքները, ժողովուրդը
կը փոխադրէին քաղաքէ քաղաք:

Յամաքի վրայով՝ նման ծառայութիւններ կ'ընէին կառապաննե-
րը կամ ձիապանները. քաղաք մը հասնելէն ետք, հարկ էր սակար-
կել՝ յաջորդ քաղաքին համար:

Նամակատար այս պաշտօնեաները կը կոչուէին Փրոքաչիոյ (Pro-
caccio), մերիններուն համար Փուոֆանի:

Միսիթար կը գտնէ փուռքաճի մը, որ իրեն կ'առաջարկէ ձիով
զինք տանիլ Պոլոնիայէն Ֆիրենցէ. ուրիշ փուռքաճի մը, որ Ֆիրեն-
ցէէն Պոլոնիա մարդ բերած ըլլալով՝ ետ դառնալիք էր, կ'առաջար-
կէր զինք տանիլ 5 ոսկիով՝ փոխանակ 8ի: Թէպէտ ձին աւելի ձեռն-
տու էր Աբրահամի միջոցներուն, սակայն կը նախընտրէ այս վերջինը:

Տէրը յաջողեց որ չվարձեցինք ձի, կը գրէ Միսիթար, ապա թէ
ոչ՝ ինչ վայ պիտի դար մեր գլխուն, որովհետեւ երկու օրուան ճամ-
բայ էր, անհնարին ու դառնաշունչ հովերով լեռներ. հա՛պա ան-
ձրեւը, ցուրտը, փոթորիկը, մշուշը:

Օգերու երեւութաբանական կողմը, կը տեսնուի, նկատի չէր ա-
ռած Միսիթար... որ ուրիշ այնքան տառապեցուցիչ հոգեր ունէր.
«Որովհետեւ մերկ էինք, եւ երեքս՝ մէկ եարունճա կամ ջուր բռնող
լաթ մը չունէինք, եւ ջուրի մէջ ինկածի պէս էինք. իսկ ցրտաշունչ
հովը մեզ կը սառեցնէր, ինչպէս Սերաստիոյ քառասուն մանկունքը»:

Միսիթար անցեր էր լեռներ ու վիհեր, բայց նման գազաթներու
պատահած չէր. «Այնպիսի ամպերու պատահեցանք եւ այնպիսի մա-
ռախուղի, որ օր ցերեկը դիչերուան պէս էր. եւ վերջապէս մեծ էր
մրրիկը»: Բարեբախտաբար, գէթ կառքերու մէջ էին: Հինգշաբթի
երեկոյեան, Մայիս 12, կը հասնին Ֆիրենցէ: Կ'իջեալին պանդոկ
մը, «խանի նման տեղ մը», կը բացատրէ Միսիթար իրեններուն, Տո-
մոյին մօտ:

Միսիթար եւ իրենները լսած էին Ֆիրենցէի փառքերը. գիտէին
որ ըլրան վրայ կայ հայազգի Մինաս իշխանին նուիրուած եկեղեցին.
բայց զբօսաշրջիկի սիրտ չունէին. ուրիշ հարցեր կ'այրէին զիրենք:

Առաջին անգամն է որ կը հանդիպէին պանդոկի. «Հոս ինչ որ
ուզենք՝ գնել ու եփել կու տանք ու կ'ուտենք»: Աբրահայրը կը նշ-
մարէ որ Ֆիրենցէի իման տարբեր էր արեւելքի խաներէն¹⁰:

Ուրբաթ օրը կը հանգչին, եւ անմիջապէս նաւակ մը վարձելով
կ'ուղղուին դէպի Ալիկոռնա (Լիվորնոյ), ուստի՝ չաբաթ մը պիտի
ուշանան. չաբաթ մը՝ ոչ աւելի:

Աբրահայրը կը ճանչնար Լիվորնոյի Բարթոլոմէոս վարդապե-
տը. գրելով 1717ի Սեպտ. 24ին, շնորհաւորած էր ատենի առջեւ
սարքուած վիճաբանութեան փայլուն կերպով անոր մասնակցիլը եւ
վարդապետական մատանիի արժանանալը:

«Առ շնորհաւորումն վարդապետականի մատանոյդ՝ զոր արդիւ-
նաւորեցար արժանապէս առնդուելիլ, ի վերայ որոյ բնաւիւք միա-
բանօք այնքան ուրախացաք, մինչ զի զբնաւս վիշտս մեր՝ զորս իսկ
գիտես՝ մոռացաք, քանզի քաջ գիտեմք զբարեւոյ պտղոյն... բազում
աւուրք անցին յորմէ հետէ լուաք զգովելի վիճաբանութենէդ ի յան-
պիսում ատենի, եւ զվարդապետանալոյդ մատանեաւ, ի պարծանս
ազգին մերոյ...»¹¹:

Հաւանաբար տեղւոյն Հայոց առաջնորդն էր. Միսիթար կ'ուզէր
անպատճառ հանդիպիլ եւ օգտուիլ անոր ալ հեղինակաւոր ձայնէն:

Աբրահայրը դէպի Լիվորնոյ մեկնելէն առաջ կ'ուզէ այցելել Ֆի-
րենցէի մէջ Վենետիկէն ծանօթ մարքիզի մը: Յանձնարարական թուղ-
թեր ունէր բարձրաստիճան անձերէ՝ Ֆերրարայի եւ Պոլոնիայի ազ-
նուամեծար անձերու ալ, բայց այդ քաղաքներուն մէջ հարկ չտե-
սաւ օգտագործել, չյապաղեցաւ այդ քաղաքներուն մէջ. տարբեր ե-
ղաւ Ֆիրենցէ, ուր նպատակ ունեցաւ ճամբէն շեղում մը կատարել:
Ուստի, ներկայացաւ Ռիքարտի մարքիզին՝ Մորոզինի - Ճարտինի
թուղթերով:

Մարքիզը մեծ սէր ցոյց տուաւ Միսիթարի եւ իր հետեւորդնե-
րուն: Իրենց առջեւ բացաւ իր բնակարանը, պտտցուց իր շքեղ սը-
րահները, ցոյց տուաւ մատուռը՝ լի սուրբերու մասունքներով. ա-
ռաջնորդեց նկարներու սրահը, դիտել տուաւ զարմանալի քարերէ
մետաքները, արձանիկները, դժուարագիւտ իրերու յարկարաժինը,
արծաթեղէններու սենեակը եւ բոլոր պալատը¹²:

Աբրահայրը բարեացակամ Մարքիզին քով պահ կը թողու իր բեռ-

10. Անդ:

11. Նմկ. թ. 18:

12. Մի. Աբ. Ֆիրենցէն, առ Հ. եղիա Վրդ.՝ Վենետիկ (1718, Մայիս 28, Նմկ.
թ. 26, 28):

ները, եւ յաջորդ օրուան համար (Շաբաթ, Մայիս 14) նաւակ մը վարձելով՝ կ'ուղղուի դէպի Ալիկոննա:

Առնոս գետը անցնելով Ֆիրենցէէն կը թափի Տիւրենեան ծով, Լիվոռնոյի մօտակայքը:

Լիվոռնոյ փոքրիկ բայց բազմամարդ քաղաք էր. հոն հայերու ներկայութիւնը ապացոյց՝ որ վաճառաշահ ալ էր, մանաւանդ 1591էն ետք, երբ Թոսքանայի դուքսը Ֆերտինանտ, Լիվոռնոյի դռները բացաւ բոլոր ազգերու առջեւ, հրաւիրելով յանուանէ նաեւ Հայերը, իբրեւ պարկեշտ վաճառականներ:

Հայերը առաջին անգամ ըլլալով Արեւելքէն կը բերէին Զիթ եւ Ալաճա կոչուած հիւսուածեղէններ. Ասորիքի կամ պարսիկ մետաքսը եւ բուստերու արուեստը: Գիտէին գործել բուստերու վրայ: Բուստերով կը զարդարէին սուրերու եւ դանակներու կոթեր, կը շինէին փոքրիկ արձաններ, մանաւանդ զանազան ձեւով համրիչներ: Ասոնցմէ բոլորակ ձեւով համրիչները՝ Լիվոռնոցիները կը տանէին Հնդկիներուն, երկայնաձեւերը՝ Ափրիկէ, իսկ խոշորագոյն հատիկներով համրիչները կը տանէին Օսմանցիներուն: Հրեաները, կը գրէ Ստ. Ապոնց, Հայերէն սորված՝ կը շարունակեն այս արուեստը¹³:

«Առաւօտն որ է շաբաթ գնամք յԱլիկոննա ջրով, եւ դառնալոց եմք անտի ալսը ցամաքով. եւ այնպէս ունիմք ի մտի թէ՛ դալ այս օրս, որ է ուրբաթ եւ Մայիսի քսան ելանեմք յԱլիկոննա, եւ շաբաթ հասնալ աստ, ընդ փուռեցանք, շաբաթ գիշեր ելանեմք, եւ միւս ուրբաթ օրն, որ է Մայիսի քսանեօթն, հասանիմք ի Հոռոմ, եթէ Տէր կամեցեալ իցէ»¹⁴:

Ասիկա Մխիթար Աբրահօր ծրագիրն է. սակայն, այլապէս կը ներկայանայ Բարդուղիմէոս վարդապետը: Լսելով մանրամասն բոլոր կնճիռները, վարդապետը Աբրահօր հարցը լաւագոյնս լուծելու համար, կը կրկնապատկէ ինքզինքը: Պիտի գրէ իր կողմէն ջատագովելու համար Հիմնադիրը եւ անոր դործը. բայց այնպիսի թափով կը նետուի, որ Աբրահայրը հարկ կը տեսնէ անձամբ մնալ անոր քով քանի մը օր եւս, եւ հսկի՞ որ չափազանցութեամբ չվնասէ դատին¹⁵:

13. Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, մասն երկրորդ, հտ. Գ, Վենետիկ - Ս. Դ. 1802, էջ 36:

14. Մխ. Աբ. Ֆիրենցէէն, առ Հ. Եղիա Վրդ.՝ Վենետիկ (1718, Մայիս 13, Նմկ. Թ. 28):

15. «Կարի յոյժ բորբոքեցաւ ի սէր եւ ի ջատագովութիւն. քանզի մինչ մի օր կամ երկու խօսեցայ ընդ նմա եւ ետես՝ ապշեցաւ, եւ գրեթէ զինքն բոլոր նուիրեաց. եւ այնքան եղեւ, մինչ զի ես վասն լոկացուցանելոյ զինքն՝ երկու երեք օր աւելի մնալոյ եղէ աստ... Ասի լոկացուցանել, զի առ ի ջատագովել զմեզ եւ եղծել զհակառակորդս, անդր քան զչափն դիմէ, եւ ես հանդարտեցուցանեմ, զի բարեխառն լինիցի (Մխ. Աբ. Լիվոռնոյէն, առ Հ. Եղիա Վրդ.՝ Վենետիկ, 1718, Մայիս 20, Նմկ. Թ. 27):

Լիվոռնոյի մէջ Մխիթար առիթը կ'ունենայ ճանչնալու քաղաքին Հայերը, որոնք զիրար կը գերազանցեն պատուելու իրենց հիւրը, նուիրատուութիւններով ալ կ'օգնեն անոր¹⁶:

Մերինները թէպէտ իջեւանած են տունի մը մէջ, բայց օրը կ'անցընեն եկեղեցին. միասին կը ժամերգեն, իսկ Վարդապետը կը խնդրէ Աբրահօրմէ՝ որ կիրակիները քարոզէ: Իբրեւ տօնական օր կ'ունենայ Մայիսի 15 եւ 22 կիրակիները եւ 26ի հինգշաբթին՝ Համբարձման տօնը:

Աբրահայրը կ'այցելէ Մոնթէնեկրոյի վանքը, ուր զրկած էր՝ հակառակ իր աղքատիկ պայմաններուն՝ Մանուէլ վարդապետը, կաղ-դուրուելու համար:

Այն օրը՝ որ ծրագրած էր հասնիլ Հոռոմ՝ 27 Մայիս, կը մեկնի Լիվոռնոյէն դէպի Ֆիրենցէ, եւ ցամաքի ճամբով կը հասնի: Կը գտնէ երկու կառք, որոնք Ֆիրենցէ մարդ բերած ըլլալով՝ դառնալիք էին Հոռոմ: Կը մտնեն 29 Մայիսի կիրակի օրը, եւ Յունիսի 2ին՝ հինգշաբթի օրը կը հասնին Հոռոմ¹⁷:

ՀՌՈՄԻ ՄԵՋ

Հոռոմ երկու երեւոյթներով կը հիւրընկալէ Մխիթար Աբրահայրը: Նախ՝ սաստիկ նեղացուցիչ տաքով, Աբրահայրը գրեթէ կը հիւանդանայ այդ անտանելի տաքէն:

«Երկու օր է այսօր որ եկի, եւ կարի շող է տեղս. եւ այրի սիրտ իմ, թէպէտ խոնձած եւս եմ ի ճանապարհէն: Լաւ յաջողութեամբ հասաք, բայց յետին օրն ի ճանապարհն շատ մեծ տաք արաւ եւ վշտացաք. եւ այնու տակաւին այրի սիրտ իմ եւ ըմպեմ յոլով շատ ջրով դսակաւ գինի»¹⁸:

«Այժմ բնակիմք ի մենաստանիկ ինչ, Սան Պանդալէոն կոչեցեալ. վճարեմք վեց վեց սկութ ամիսն. եւ լաւ տեղ է եւ լաւ անձինք են: Բայց միայն այս է, զի մերթ սոխով կերակուր լինի, եւ ես թարց վնասու ոչ մնամ թէ ուտիցեմ. եւ որքան առ այս, թերեւս սակաւ անդամ լինիցի, եւ այնու գործանիցիմ, եւ կամ այլ ինչ հնար»¹⁹:

Հետաքրքրական են Մխիթար Աբրահօր Հոռոմի մէջ անցուցած չրջանին կրածներուն նկարագրութիւնը, զորս կ'ընէ յաջորդ նամակներուն մէջ: Ինչ որ կ'երեւի Ֆիզիքական մեծ նեղութիւն կրած է տեղական կերակուրներէն, եւ շատ տառապած:

16. Մխ. Աբ. Ֆիրենցէէն, առ Հ. Եղիա Վրդ.՝ Վենետիկ (1718, Մայիս 28, Նմկ. Թ. 28):

17. Նմկ. Թ. 28 եւ 29, առաջինը գրուած Ֆիրենցէէն (1718, Մայիս 28), երկրորդը՝ Հոռոմէն (1718 Յունիս 49 առ Հ. Եղիա Վրդ.՝ Վենետիկ):

18. Մխ. Աբ. Հոռոմէն, առ Հ. Եղիա Վրդ.՝ Վենետիկ (1718, Յունիս 4, Նմկ. Թ. 29):

19. Մխ. Աբ. Հոռոմէն, առ Հ. Եղիա Վրդ.՝ Վենետիկ (1718, Յունիս 2, Նմկ. Թ. 34):

շաբթի օր մը (13 Յունիս, տօն Սրբոց Կուսանացն Հռիփսիմեանց)․ ներկայ է նաեւ Սակրիփանդէ Ծիրանաւորը։ Սրբղ․ Հայրապետը կը հետաքրքրուի՝ թէ ինչ ընթացքի վրայ են գործերը, եւ կանչելով իր քարտուղարը՝ կը յանձնարարէ որ լաւ հոգ տանի Աբբահայր համար։ Քարտուղարը կ'ըսէ՝ թէ արդէն ստանձնած է հոգը, եւ թէ ետեւէ է, եւ թէ ասոնց դէմ գրուած քոլոր հակառակ թուղթերը հաւաքած է եւ պիտի տայ իրենց՝ որ անոնց համեմատ ամբաստանութիւնները հերքեն։

— Ե՞րբ կ'ըլլայ ժողովը, կը հարցնէ Հայրապետը, կարելի՞ է մինչեւ ութը օր։

— Կարծեմ ոչ, կը պատասխանէ Ծիրանաւորը․ քայց տասնեւհինգ օրէն կ'ըլլայ։

— Երբ ըլլայ՝ ասոնց խնդիրն ալ հոգացուի։

Եւ գրեթէ կը փութացնէր, կ'աւելցնէ Մխիթար։ Պապը կը հետաքրքրուի, թէ արդեօք Աբբահայրը կատարած էր իր յանձնարարած այցելութիւնները․ եւ լսելով՝ թէ այո, կ'ուրախանայ³¹։

Սրբազան Պապին քով Հիմնադրին գտած ընդունելութիւնը, չափազանց կը բորբոքէ, հեռուէն, Ս․ Ղազարու միաբաններուն երեւակայութիւնը, եւ ոչ միայն անոնցը․

«Մի փրկեթէ եկեալ է ի Հռոմայու, կը դրէ Հ․ Եղիա Վրդ․ Վեներաբիլէն, 1718 Օգոստ․ 26 թուակիր նամակով առ Մխ․ Աբբահայր, եւ ամէնուն կը պատմէ թէ Պապը աղնիւ վանք մը տուեր է Մխիթարի՝ Սան Ճովաննի Լաթեռնի եկեղեցւոյ մօտերը։ Ծատերը արդէն շնորհաւորեր են մերինները․ ուրիշներ կը կարծեն՝ եթէ ոչ վանք առնուազն դրամ տուած պիտի ըլլայ։ Աբբահայրը կը ստիպուի պաղ ջուր թափել․ «Սրբազան Պապը այդ մասին բնաւ չմտածեց․․․ ըսաւ միայն՝ թէ հոս ալ վանք մը առէք։ Փնտռեցէք, կրնայ ըլլալ, ու կը տրուի ձեզի․ որովհետեւ շատ կը սիրեմ, եւ լաւ է որ հոս ալ գլխաւորէք։ Իսկ երբ խօսքը աղքատութեան մասին կը դառնայ, կ'ըսէ․ Մուրալով կ'ըլլայ․ եւ չ'ըսեր թէ ինքը կ'օգնէ։ Եւ այս ճիշտ է որ Սրբազան Պապը մեծ նեղութեան մէջ է եւ շատ խարճ եւ զբաղմունք ունի գլխուն վրայ»³²։

31. Անդ։

32. Մխ․ Աբ․ Հռոմէն, առ Հ․ Եղիա Վրդ․ Վեներաբիլ (1718, Յունիս 11, Նմկ․ Թ․ 31)։ Օրուան Քահանայապետն է Կղեմէս ԺԱ․ որ իր դահակալութեան տարիներու ընթացքին (1700-1721) շատ խոռվայոյզ չըլան մը ապրեցաւ՝ թէ քաղաքական եւ թէ բարոյական հարցերով։ Բարոյական մարդին մէջ հարկ էր լուծել գլխաւորաբար Յրանսայի մէջ ծագած Յանսէնեան կոչուած մեկնութիւնները, իսկ Սպանիոյ յաջորդութեան պատերազմները իրարու դէմ հանեցին Եւրոպայի արեւմտեան պետութիւնները․ բռնաբարոյեցան Պապական պետութեան սահմաններն ալ, թէպէտ յայտարարած էր իր չէզոքութիւնը։ Յաջորդեց արեւելեան

Բնականաբար Հիմնադրին ասդին անդին դիմելները, ունէին իրենց նպատակը։ Այն անձերը՝ որոնց ղրկուած էր, կամ որոնց հետ յարաբերութեան մէջ կը մտնէր, ունէին իրենց կշիռը։ Անոնք էին որ պիտի վարէին Ս․ Ժողովը եւ վճռէին խնդիրները։ Սրբազան Հայրապետը, ինչպէս տեսանք, կը յանձնարարէր Քարտուղարին՝ որ Աբբահայր տար բոլոր գրութիւնները, որպէսզի իւրաքանչիւր ամբաստանութեան դէմ՝ դնէր արդարացումը, կազմէր գրքոյկ մը, բաժնէր բոլոր Կարդինալներուն, հատ մըն ալ իրեն համար։

ԱՄԲԱՍՏԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Մխիթար կ'առնէ իր մասին Հռոմ ղրկուած քոլոր գրութիւնները։ Հիմա դէմ առ դէմ են․ ինքը, եւ զինք ամբաստանող ուժերը։ Եւ Աբբահայրը հանդարտօրէն, սիրով ու ներելով կը կերտէ իր գործին եւ իր առաքելներուն ջատագովականը, մանաւանդ թէ՝ նախախնամութեան փառաբանութիւնը։

Ո՞վ արդեօք հակառակորդներէն կրնար մտաբերել, թէ մինչ կը կարծէին Մխիթարի գործը Պոլսոյ մէջ իսկ խափանել, արմատախիլ ընել Մեթոնէն, Մխիթար եւ իրենները հասնէին երկիր մը՝ զոր նախախնամութիւնը պատրաստած էր իրենց, մի միայն իրենց եւ ուրիշ ո՛չ մէկուն։

Ամէն ինչ պատրաստ էր՝ ամբաստանութիւններու եւ զրպարտութիւններու կոյտին տակ թաղելու եւ մարելու Մխիթարի պալլացող ճրագիկը։ Հասաւ Նախախնամութիւնը եւ այդ արձակուած քարերու կոյտէն ձեւեց պատուանդան մը, որուն վրայ սկսաւ լուսարձակել նորածագ փարոսը։

Եւ ի՞նչ էին ամբաստանութիւնները։

Այսօր թերեւս ծիծաղելի թուին մեզի․ բայց այդ մութ օրերուն՝ մօթեղը ուղտ կը թուէր․ զարմանալի չէ․ մանաւանդ որ ամբաստանութիւնները կու գային Լատին Պապի արքայական փոխանորդէն, որ Հռոմի ներկայացուցիչն էր Պոլսոյ մէջ։

Ամփոփելով զանոնք քանի մը տողերու մէջ, ահա հետեւեալները, ինչպէս առաջ կը բերէ Աբբահայրը՝ իր գրքոյկին մէջ, որու խորագիրն է․

Ricorso fatto nell'anno MDCCXVIII, agli E.mi e R.mi Principi i Sig.ri Cardinali della Sacra Congr. de Propaganda Fide, da i Monaci Armeni di S. Antonio Abate, Fondati in Modone e residenti in Venezia, in Roma MDCCXVIII.

Եւրոպայի ազգերու միութիւնը, որուն յարեցան Վեներաբիլ եւ Պապը, ու յաջորդեցան պատերազմեցան Թուրքերու դէմ։ Պատերազմները, սակայն, խաղաղութիւն չբերին Եւրոպայի։

ա. Մխիթարյաններու վախճանն է զրամ հաւաքել:

բ. Տգէտ են, այնքան՝ որ կարող են, փոխանակ բարիք ընելու, դէպի մոլորութիւն առաջնորդել ժողովուրդը:

գ. Մխիթար Աբրահայր իրաւունք չունի քարոզիչներ զրկելու, եւ հակառակ եղած աղղարարութիւններուն՝ կը շարունակէ զրկել:

դ. Կը պարծենան թէ սուրբ են, թէ իրենց իմաստութիւնը զըրբերէն չէ, այլ կ'ընդունին իրենց Աբրայէն, որ իր կարգին՝ ուղղակի Ս. Հոգիէն առած է:

ե. Անհնազանդ են եկեղեցական իշխանութիւններուն:

զ. Յատկապէս Հ. Գէորգ, չի՛ հաւատար սուրբերու բարեխօսութեան, չի՛ յարգեր սուրբերուն մասունքները, պատկերները³³:


— Առաջին կէտին վրայ չ'արժեր հոս երկարել. Մեթոնի քարոզիչներուն աղքատութեան կը վկայեն քաղաքներու ժողովուրդները, ուսկից անցած են անոնք: Եւ Հիմնադիրը անոնց իսկ վկայութիւններով, որ բաղմամբիւ էին, կը հերքէ ամբաստանութիւնը:

— Մեթոնի առաքեալներուն տգէտ ըլլալը ուսկի՞ց կը հետեւցնէ անձ մը՝ որ ծոմ է հայերէնէ, 'կը հարցնէ Մխիթար: Անով հանդերձ՝ լայնօրէն կը փաստէ թէ ինչքան երկար ժամանակ կը տքնին իր հետեւորդները, մինչեւ հասնին վարդապետական աստիճանին:

— Երրորդ կէտը կարօտ էր լուսարանութեան: Լատին եկեղեցական մը չի՛ գիտեր՝ որ Հայոց մէջ վարդապետական բարձրագոյն աստիճանի դաւադան ունեցողը իրաւունք ունի ոչ միայն ինք անարդել քարոզելու ամէն տեղ, այլ նաեւ դաւադանի իրաւունքով՝ քարոզութեան զրկելու իր աշակերտները: Հետեւաբար, հակառակ Պոլսոյ Վիքարին արգելքին, Մխիթար կը գործադրէր իր իրաւունքը, ստացած՝ էրզրումի Եպիսկոպոսէն, եւ ճանչցուած՝ Զորբորդ ուխտով նաեւ Մխիթարութեան Սահմանադրութենէն, որ Հռոմէն ալ ընդունուած էր:

— Թէ սուրբ են: Հոս Մխիթար թեթեւ մը կը հեզնէ. ատիկա մեր հակառակորդներէն հնարուած յիմարութիւն մըն է, կ'ըսէ, թէ մենք սուրբ ենք եւ Մուրր Հոգիին հեղումով իմաստուն դարձած: Բաւական պիտի ըլլար նման բան մը ըսել, որպէսզի ժողովուրդը մեզ խենթի տեղ դնէր: Արդ, ժողովուրդին առջեւ վայելած մեր քիչ մը վստահութիւնը կը ցուցնէ՝ թէ այդպիսի յիմարաբանութիւնները սած չենք:

«Ասացեալ լինի Գէորգ Վարդապետն՝ թէ թէպէտ ես եւ այլք ընկերք իմ ոչ երբեք ընթերցաք եւ ոչ ուսաք, սակայն ունիմք զգերբնական զիտութիւն, զոր առեալ եմք յԱբրայէն մերմէ. վասնզի Հո-



Ամեն մեարսայ ըզ պատանիս ուշիմն կրնէր քերթողաբար ըզհայ լեզուն 'ի լոյս ածէր: Եւն իսահակ քերթողաշայր անդէն հասէր, զուսեալսն յաթէն իսկ առաքել խորհրդակցէր: Զյս է՝ զմիմսէս՝ զդաւ էրթ, զմամբրէ՝ Լեզիլէ, զՂազար, զԵզնակ, Լեզասողնիկ, Լեզայլս ընտրէ:

33. Ricorso, Roma 1718, գլուխ III եւ IV, էջ 9-30:

Թեան հանած էին մետաղներ ու խաչեր: Հ. Գեորգ, որ Պոլիս կը դառնուէր քարոզութեան համար, խորհուրդ տուած էր չցուցադրել, այլ զգեստին տակ ծածուկ պահել սրբազան խաչ կամ մետաղ: Կամ վերցնել՝ տուններու մուտքի առաջին սենեակներէն սրբազան պատկերները եւ տանիլ աւելի ներքին սենեակներու մէջ:

Առիթ մը չէ՞ր Հ. Գեորգի հակառակորդներուն համար՝ վաղելու առաքելական Վիքարին քով, ազադակելու՝ թէ Հ. Գեորգ հերետիկոս մ'էր, չէր յարգեր սուրբերը, անոնց սրբազան պատկերները:

Աւելի ծանր էր անհնազանդութեան վերադարձը: Հ. Միքայէլ Զամչեան իր կարգին կը պատմէ ժամանակին անցքերը, որոնցմէ կը բացատրուի ծալքը իրականութեան: Հայ կաթողիկոսութեան, ուղեւորութեան ժամանակի իշխանաւորներուն վարմունքէն, կը մտածեն՝ լատին Վիքարին խորհրդակցութեամբ՝ բաժնուիլ ազգին մեծ հատուածէն, ու կազմել առանձին համայնք մը, իր եկեղեցիով, իր նուիրապետութեամբ³⁵:

Այդ ժողովին ներկայ եղած է նաեւ Հ. Պօղոս Վ. Մեթոնի Մխիթարեան Հայրերէն: Հ. Պօղոս չի համաձայնիր, հակառակ լատին եպիսկոպոսին պնդումին, ազգէն բաժնուելու կարծիքին: Մխիթար Աբբահայր այդ ուղղութեամբ յատուկ հրահանգներ տուած էր իրեններուն, չէ՛ր ուզեր այդ բաժանումը: Հետեւաբար չէ՛ր փափաքեր որ իրենները ո՛ր եւ է կերպով մասնակցէին այդ խնդիրներուն: Այս կեցուածքն էր որ անհնազանդութիւն կ'որակուէր լատին եպիսկոպոսէն: Ելքը ցոյց տուած էր, թէ որքան խոհեմ էր Մխիթար Աբբահայր դիրքը³⁶:

Բայց ինչո՞ւ Ռայմոնտոյ Կալանի արքեպիսկոպոսը, Պատրիարքական Փոխանորդ, այնքան ծանր դիրք բռնած էր Մխիթարի եւ իրեններուն հանդէպ, մինչ սկզբնական տարիներուն՝ այնքան բարեացակամ էր:

Փոխանորդը, կը պատասխանէ Մխիթար Աբբահայր, ունէր խորհրդական մը՝ որ կը վախէր անոր անվերապահ վստահութիւնը: Այս անձը Մինաս Վրդ. Օսղան, ժամանակին, 1701ին դիմած էր Մխիթար Աբբահայր որ ղրկէն ալ ընդունի իր աշակերտներու կարգին. ընդունելի եղած չէր: 1705ին, վերստին դիմած էր, այս անգամ յանձնարարական թուղթերով: Աբբահայրը երկու ամսուան փորձէ ետքը, ազատ արձակած էր: Արդ Մինաս Վրդ. կ'ուզէր ամէն գնով ցուցնել Մխ. Աբբահայր, թէ սխալած էր՝ զինք չգնահատելով, չկռուելով իր արժանիքը:

«Այս պատճառով մեզի դէմ լարուած է եւ միշտ հալածած է մեկ:

35. Հ. Միք. ԶՄԶ. ԱԶ. Գ. էջ 756-762:

36. Ricorso, էջ 24-25:

Մոնս. Փոխանորդը պէտք չէր այնքան վարկ տալ այդպիսի անձի մը, մանաւանդ որ, կը խորհրդածէ Մխիթար, Մինաս Վրդ. ի ամբաստանութիւններուն դէմ՝ ունի խաչատուր Վ. ի նման անձի մը տուած վկայութիւնը³⁷:

ԳՐԻՐՆ ԶԵՒԱԽՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԸ

Մխիթար շատ տառապալիքներ կը պատրաստէ իր ջատագովակները, դիւշերը ցերեկին խառնելով. ստուշիւ տառապալիքն՝ որովհետեւ չափազանց տաք են օդերը. դրեթէ կը հիւանդանայ: Յուլիս-Օգոստոս՝ Հռոմի ամէնէն ջերմ ամիսներն են. անով հանդերձ՝ կը վերջացնէ գրութիւնը: Հարկ է հիմա թարգմանել հայերէնէ իտալերէնի: Այդ եւս կը կատարուի: «Մեր իտալերէնը քաղցրացնել տուինք, որպէսզի եւս կը կատարուի: «Մեր իտալերէնը քաղցրացնել տուինք, որպէսզի մի գուցէ քաղցրացնելու ժամանակ՝ փոխէր իմաստը». եւ ասիկա կը տեսէ 12 օր: Թարգմանողն է Աբբահայր աշակերտներէն Հ. Մատթէոսի եղբայրը՝ Ստեփանոս Վրդ. «Զմեծագունեղ աշխատանս արար առ ի թարգմանութիւն դրոց մերոց եւ լաւ թարգմանեաց»³⁸:

Մինչ այդ՝ կատարուած անընդհատ երթեւեկները, դեսպանական կառքով այցելութիւնները, Հռոմի փողոցներուն մէջ երկար հեկուտներ շրջանները, ամի առնելով մեծամեծներու դռները, ծածկուած չեն մնար, կ'արթնցնեն Հռոմի շրջանակներու մէջ հետաքրքրութիւնը: Խոնարհ, ժպտադէմ արեւելցի վանական մը, կառչած իր դաղափարականին, կը դիմադրուէ Հռոմէն կարգուած առաքելական Վիքարին, կը պայքարի եւ արդարութիւն կ'ազադակէ:

Հռոմի մէջ այլեւս ծանօթ դէմք մը դարձած է. փր դատը կը հետաքրքրէ Հռոմայեցիները. Աբբահայրը համարձակ է աջուս, նոյն իսկ Պապին առջեւ:

«Օր մը կը դառնուէր Հայոց եկեղեցին, անցեալ Կիրակի, 26 Յուլիս, կը պատմէ ինքնին, Սրբազան Պապը հանդիպեցաւ Հայոց եկեղեցին. դրան առջեւ կենալով, վասնզի ուրիշ տեղ երթալիք էր, կ'ուզէր տեսնել իր կատարել տուած նորոգութիւնները: Մենք ալ ներկայ էինք: Հաղիւ թէ մեղ տեսաւ, ինծի նայելով՝ ձեռքով եւ ձայնով կանչեց զիս: Սկսաւ զանազան նիւթերու վրայ խօսիլ ինծի հետ, ես ալ պատասխանեցի: Յետոյ հարցուց. Ի՞նչպէս եղաւ ձեր գործը, լաւ առաջ կ'երթայ. (ասիկա հարցուց՝ իմանալու համար, թէ ինչպէս

37. ԱՅԳ, էջ 12-13, 10:

38. Մխ. Աբ. Հռոմէն, առ Հ. եղիա Վրդ.՝ Վենետիկ (1718, Յուլիս 30, Նժկ. Թ. 38):

«Սպասաւորք, քանոնիկ, ճէնդլումք, եւ ասպաթիք կարգինալաց», որոնք դրան մօտ կը սպասէին իրենց տէրերուն: Ամէնքն ալ դիտէին որ ժողովի ժամանակին մեծագոննեղ մասը՝ Մխիթարեանց խնդիրներուն համար է, եւ կը սպասէին թէ ինչ վճիռ պիտի ելլէ: Երբոր լսեցին թէ Աբբահօր եղաւ յաղթութիւնը, զարմացան. եւ անոնք որ ծանօթ էին՝ աւետիս կու տային: Եւ որովհետեւ ասոնք բաղմաթիւ էին, բոլոր Հռոմի մէջ տարածուեցաւ, թէ այս ինչ միայնակեաց, պատրիարքական Վիքարին հետ վէճ ունենալով, յաղթական ելաւ»:

Յաղթանակով տուն կը վերադառնան. կրօնաւորները որոնց քով օթեվանած էին, արդէն վերջացուցեր էին ընթրիքը եւ իրարու հետ կը խօսակցէին: Հազիւ թէ կը տեսնեն Մխիթարը եւ իրենները, ընդառաջ կը վազեն. «Խօնչպէս եղաւ վճիռը, կը հարցնեն: Յաղթութիւն, կը պատասխանեն. եւ ամէնքը կ'ուրախանան»:

Յաղթանակը յուսացուածէն աւելի վեր էր: Ս. Ժողովը Մխիթար Աբբահօր իրաւունք կու տայ, ոչ միայն Գաւաղանի զօրութեամբ առաքելութեան ղրկելու քարոզիչներ, այլ կ'աւելցնէ նաեւ այն իրաւունքը, որ ունէին Արեւմուտքի մեծամեծ կարգերը՝ Մխիթարներ ղրկելու: Ուստի, ոչ միայն կը ճանչցուի Մխիթարի եւ իրեններուն անմեղութիւնը, կ'արգարացուի ուղեղիծը, այլ եւ կ'ընդարձակուի իրաւասութեան սահմանը՝ նորանոր իրաւունքներով, որոնց մասին թերեւս մտածած չէր Հիմնադիրը:

Ամբողջ յաջորդ օրերը երթեւեկ մըն է դէպի Սան Պանդալէոնի վանքը, ուր էր Մխիթար, աւետիսի եւ ուրախակցութեան: Պակաս չեն նաեւ «ճանճեր», Կարգինալներու սպասաւորներէն, որոնք կու գան շնորհաւորանքի, եւ փոխարէն աւետչեայ սպասելու:

Կը սկսին փոխադարձաբար Մխիթար Աբբահօր կողմէ շնորհակալութեան այցելութիւնները. ու նախ՝ Սրբղ. Վեհապետին. հոն են Սակրիփանդէ Կարգինալը եւ քարտուղարը:

— Եղա՞ւ ուղածիդ եւ փափագիդ համաձայն, կը հարցնէ Պապը. «Իրովին հաճեա՞լ ես». իբրեւ թէ ըսէր՝ թէ այդ ամէնը եղաւ իմ անձնական կարգադրութեամբ: Աբբահայրը շնորհակալ կ'ըլլայ: «Ստուղիւ Սրբազան Պապը յատկապէս յանձնեց եւ շարժեց եւ եղաւ պաշտպան, կը խորհրդածէ Մխիթար, ու կը յաւելու գոհութեան ինքնաբոլի աղօթք մը Աստուծոյ, որ ամէն բանի մէջ գործեց եւ յաջողցուց, վաանդի ինքն է ամենակարող, եւ առանց իրեն՝ ամէն բան ունայն է եւ անզօր»:

Շնորհակալութեան այցելութիւնները կը շարունակէ Մխիթար Վենետիոյ Դեսպանին, Մեծամեծներուն, Կարգինալներուն, որոնք կը շնորհաւորեն զինք նաեւ գրեթէ շարադրութեան եւ ներկայացած կերպիւն: «Ինչ որ երեք ամիս տրամադրեցինք, կը գրէ, ինչ աշխատանք որ թափեցինք, թէ՛ գրելու, Մեծամեծներու դռները չըջելու, ցորենի

պէս լաւ երկրի մէջ սերմանեցինք. յետոյ երեք ժամուան մէջ հասկը բուսաւ, հունձքը հասունցաւ, եւ հնձելով՝ շտեմարանին մէջ հաւաքուեցաւ»⁴³:

ՎԵՐԱԴԱՐՁ

Այլեւս թեթեւցած՝ սրտով եւ հոգւով, Մխիթար կը ծրագրէ Հոկտեմբեր ամսուան ընթացքին ճամբայ ելլել դէպի Վենետիկ. բայց ստիպուած է յետաձգել. շատ զբաղած է գրաւոր աշխատութեամբ մը: Աբբահայրը չի գրեր թէ ինչ էին այդ աշխատութիւնները: Հ. Եղիա Վ. ին գրած նամակին մէջ կ'ակնարկէ «Այսօր շատ աշխատեցայ գրեւ. ին գրած նամակին (նամակը), տակաւին զբաղանքներ ունիմ, եւ լով, եւ հազիւ գրեցի (նամակը), տակաւին զբաղանքներ ունիմ»⁴⁴:

Թուի թէ մինչեւ 5-6 Նոյեմբերի հազիւ ասկէ պիտի ելլեմ»⁴⁵:

«Թէպէտ ես ոչ կամէի աշխատիլ, բայց Մեծամեծները ստիպեցին եւ այս մեծ քեռը դրին ուսերուս վրայ... Այս մասին շատ բան կայ պատմելիք»⁴⁵:

Կը տեսնուի Ս. Ժողովը յանձնէր էր Մխիթար Աբբահօր նոյն ժամանակի տաղնապող հարցերու մասին յայտնել իր միտքը: Մխիթար կու տայ իր կարծիքը. սակայն, շատ հաւանականութիւն չի տեսնիր որ իր ձայնը լսելի ըլլայ. իր միտքը շատով կը տարբերի ժամանակակից ուրիշներու գաղափարներէն:

«Եթէ այս սազն ալ լաւ ձայն հանէ, շատ մեծ զարմանք պիտի ծնանի ամէնուն մտքին մէջ... սակայն փոքր ձայն պիտի հանէ»:

Տեղ մը յանկարծ յստակ կ'ակնարկէ. «Ես կ'ապացուցեմ, որ եթէ ուղղափառներու թոյլ չտրուի երթալ Հայոց եկեղեցին, գրեթէ պիտի լռէ ուղղափառութիւնը»:

Այս խնդրին շուրջ Հռոմ ունէր իր տեսակէտը, եւ ուրիշներու Այս խնդրին շուրջ Հռոմ ունէր իր տեսակէտը, եւ ուրիշներու կողմէ Արեւելքէն եկած հակառակ կարծիքները. չսուեցաւ Մխիթար Աբբահօր ձայնը. ուղղափառութիւնը գրեթէ լռեց, մանաւանդ թէ սառույցէ պատուար մը ձեւացաւ. երկու եղբայր համայնքներու միջեւ: Աստուածային յատուկ ճառագայթ մը միայն կարող է հալեցնել զայն:

Այլեւս Մխիթար կը պատրաստուի վերադարձի. պարապ ձեռքով պիտի չդառնայ. կրցածին չափ կը հոգայ գրքեր, ոչ միայն հայերէն, այլ նաեւ եւրոպական լեզուներով. կը հոգայ սուրբերու մասունքներ, կենաց փայտէն կտոր մը:

Սրբազան Պապին համար պատրաստել տուած էր ձեռագրէ ընդօրինակութիւն մը, Թուղթ Գրիգորի Լուսաւորչին եւ պատասխանիք

43. Մխ. Աբ. Հռոմէն, առ Հ. Եղիա Վրդ.՝ Վենետիկ (1718, Հոկտ. 1, Նմկ. Թ. 47):

44. Մխ. Աբ. Հռոմէն, առ Հ. Եղիա Վրդ.՝ Վենետիկ (1718, Հոկտ. 15, Նմկ. Թ. 49):

45. Մխ. Աբ. Հռոմէն, առ Հ. Եղիա Վրդ.՝ Վենետիկ (1718, Նոյ. 19, Նմկ. Թ. 54):

«... Այլ եւ աղաչեմ որ զգուշացնես մերինները... որ զբուրեամբ կամ բերանով թող չմեծաբանեն, այլ սիրով ու խաղաղութեամբ վարուիք անոնց (նախկին հակառակորդներուն) հետ. վասնզի մեծ բարիք ծագեցաւ իրենց ըրածէն. թէպէտ Աստուած ըրաւ մեզի այս բարութիւնը, բայց ինչ եւ իցէ, պէտք ենք ներել անոնց. եւ ասով ալ չենք բաւականանար, այլ միշտ աղօթող ենք անոնց համար, որպէսզի ինքն Յիսուս այս կեանքին մէջ զիրենք ամէն տեսակ բարի համբաւներով ու առաքինութիւններով զարդարէ եւ հանդերձեալին մէջ ալ մեծ փառքով»⁵¹ :

«Այս բոլորը՝ Աստուած ըրաւ, եւ ոչ մենք, կը գրէ Մխիթար՝ Պոլիս, Հաճի Յարութիւնին, որ յաջողեաց ամէն բան, ոչ միայն բարեկամներու միջոցով, այլ նաեւ մեզ հալածողներու ձեռքով, որ մեզի օգնական եղան իրենց զբուրեմներով... որք ի միում զրոջ գրէին զիմն, եւ ի միւսն զներհակն նորին, եւ այս նոյն անձին ձեռնագիր աներկբայ ստուգութեամբ»⁵² :

«Ով սիրելիներ, մենք տէրունական հրամանին համաձայն՝ չուղեցինք վրէժխնդիր ըլլալ, այլ՝ որքան մեր կարողութեան մէջն էր, ջանացինք պահել անոնց պատիւը. այնքան միայն խօսեցայ, որքան հարկաւոր էր մեզ արդարացնելու զարարութենէ վասն զի մէկու մը չարիքը չեմ ուզեր, նոյն իսկ եթէ աչքս հանեն», կը գրէ Մխիթար:

«Ուստի, ձեզի ալ կ'աղաչեմ, որ սիրով վարուիք անոնց հետ. ես այսքանը ձեզի ի տեղեկութիւն գրեցի, եւ ոչ զանոնք նախատելու. ուրեմն, դուք ալ զանոնք մեզի պէս սիրելու եւ պատուելու էք: Վասն զի ինչ որ, ով որ ալ ըլլայ, մեզի դէմ ըրաւ, չճանչնալով ըրաւ, եւ պարտինք ներել, որովհետեւ չեմ կարծեր որ թշնամութեամբ եւ չար մտքով ըրած ըլլան, այլ՝ սխալելով մեր մասին թիւր իմացան, եւ կը համարէին թէ ես ամէն բան որ կ'ընեմ՝ ինքնագլուխ եւ Ս. Եկեղեցիէն առանց հրամանի կ'ընեմ: Այնպէս (ինքնագլուխ) չէր, բայց պատահումը բերաւ՝ որ անոնք այդպէս ծուռ իմանան:

«Ուրիշ պատճառ մըն ալ կայ, կ'եզրակացնէ Մխիթար Աբբա-հայր, զանոնք սիրելու. ինչ որ ալ ըլլայ, ինչ որ մեզի դէմ ըրին, Աստուած մեր օգուտին եւ փառաւորութեան դարձուց. հետեւաբար, նոյն բարիքները յառաջացնողն Աստուած՝ կը պահանջէ որ ներենք անոնց եւ զանոնք սիրենք. եւ այս բաւ է»⁵³ :

Հ. ՅԱԿՈԲ ԶԱՆԹԱՅԵԱՆ

ՄԻԽԻԹԱՐ ԱՐԲԱՆՅՐ

ԵՒ ԹՐԱՆՍԻԼՎԱՆԻՈՅ ՄԻԽԻԹԱՐԵԱՆ ԱՌՔԵԼՈՒԹԵԱՆ

ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆԸ

(1719-1723)

ՆԵՐԱԾԱԿԱՆ

Բազմաթիւ թագաւորութեան կործանումէն ու Կիլիկիան թագաւորութեան ջնջումէն ետք՝ Անիէն դադարած շուրջ երեք հարիւր հայ ընտանիքներ, բնակութեան յարմար քաղաքներ կը ստանան Մոլտաւիոյ մէջ, Աղեքսանդր Բարի իշխանին շնորհիւ, ԺԵ. դարու սկիզբը: Եօթը քաղաքներ՝ Սուչաւա, Պոթոլան, Վասլու, Տորու սկիզբը: Եօթը քաղաքներ՝ Սուչաւա, Պոթոլան, Վասլու, Տորու սկիզբը: Եօթը քաղաքներ՝ Սուչաւա, Պոթոլան, Վասլու, Տորու սկիզբը: Եօթը քաղաքներ՝ Սուչաւա, Պոթոլան, Վասլու, Տորու սկիզբը: Եօթը քաղաքներ՝ Սուչաւա, Պոթոլան, Վասլու, Տորու սկիզբը:

Սակայն, երբ 1668ին, Մոլտաւիոյ իշխանութեան դէմ յեղափոխական շարժում կը ստեղծուի, եւ յաջորդ տարին՝ Թուրքերը Լեհաստանի Բոտուլիոյ նահանգին վրայ կը յարձակին, Մոլտաւիոյ Հաստանի Բոտուլիոյ նահանգին վրայ կը յարձակին, Մոլտաւիոյ Հաստանի վրէժակը կը վատթարի: Շատեր իրենց կեանքն ալ վրայ կուտան, ուրիշներ կը զրկուին իրենց ինչքերէն, իսկ ողջ մնացողները՝ նախատեսելով աւելի դառն օրեր՝ կ'որոշեն հեռանալ երկրէն ու դիմել Կարպատեան լեռներու խաղաղ լանջերուն, գտնելու համար Թրանսիլվանիոյ հիւրընկալ դաւառներուն մէջ՝ կեանքի ապահովութիւն:

Անցնելով սարերու կիրճերէն՝ երեք տարի կը մնան անստոյգ վրձակի մէջ, մինչեւ որ Ափաֆի Ա. Իշխանը Թրանսիլվանիա մնալու արտօնութիւն կու տայ Հայերուն, որոնք կը հրաժարին անգամ մըն ալ Մոլտաւիա վերադառնալու ծրագրէն:

Իմաստուն վարչապետը բաւական հասու ըլլալով Հայերու ձեռնբեկութեան եւ աղնիւ նկարագրին, ինչպէս նաեւ հաստատ հիմերու

51. Հ. Եղիա Վրդ. Վենետիկէն, առ Հաճի Յարութիւն՝ Կ. Պոլիս (1718, Հոկտ. 7):

52. Մխ. Աբ. Վենետիկէն, առ Հաճի Յարութիւն՝ Կ. Պոլիս (1719, Յունուար 22, Նմկ. Թ. 59):

53. Անդ: